


դուք էիք աղաւթիք միամիտք տաճարասուծք, զորս վասն փափուկ մտն արկիմ ի վարժ և կալած որսորդք ապականիչք. դուք էիք ծիծառուծք տնասուծք, որ ճոռուղէիք քաղցրածայմ քարքառովք ի տաճարն սրբութեամ, և մտիմ օծք հարամիք և համիմ իյրաքամչիւր բուծոց. դուք էիք ճնճողուք շինամուտք ծայմակիցք մարդկամ, և հասիմ վարութեակք ապականիչք ցրուցիմ իլուքաքամչիւր երամոց¹.

Միս բառի ներկայութիւնը՝ փոխանակ մարմինի, վաղժամութիւն մըն է. մարդ կարծէ թէ դեռ երէկ զբուած է.... բայց ինչ որ լեզուին մէջ գեղեցիկ կայ, կ'եւրեւի թէ ժամանակագրութիւն չունի. աւէն դարու է:


Հ. Ն. ԱՆԻՐԻՆԵԱՆ

Շարայարելի



Ս. ԲԱՐՍԷԻ ԿԵՍԱՐԱՑԻՈՅ

« Յաղագս վեցօրեայ առաջ արարչութեան »



Էջ 116. տող 24. « Զայս ասնն քաղեցիք, որ միշտ ընդ աստեղս հային »,:

Ուղղ. քաղեցայքն ,:

Հմտ. էջ 150. տող 16. « Զիք քաղեցայ և ոչ աստեղագէտ »,:

Էջ 116. տող 24. « Եղիցին ի նշան և ի ժամանակս և յաւուրս և տարեկանս », ... ի զնաց ժամանակաց:

Ուղղ. « ի զնացս... »:

Էջ 118. տող 16. « Ծնանի մանուկ դժուարին երկամբք մօրն՝ որ ծնանին, և կայ մանկաբարձն զեգեղեալ տեսանել՝ թէ արժէ իցէ մանուկն եթէ էգ. կատարեալ կայ լսել զաղաղակ լալոյ մանկան, զի այն է նշանակ կենաց նորա »,:

Ուղղ. « կարկասեալ կայ լսել »,:

Ականջը կը կառկառի լսելու թէ երեխայի ձայնը և թէ համբելու վայրկեանները, ստուգելու ո՞ր աստղի տակ ծնանելու ըրպէն:

Հմտ. « Արդ ո՞րչափ ժամս վայրկենից և

ըրպէից համարիցի անցեալ աստեղագէտն մինչ կայր ոչ ունէր մանկաբարձն լալոյ մանկանն »,։ կայր ոչ ունէր նոյն է ընդ կուսկասեալ կայ լսելու. տող 27:

Էջ 118. տող 30. « Եւ դարձեալ եթէ այլ ոքն եւս զիպեսցի ժամաբաշխն, և ըրպէհհամարն՝ արտաքոյ տանն որ ծնաւ մանուկն.... ճանաչել զժամ մանկանն՝ որ ծնաւ, ենէ.... Եւ թուի ինձ այլ այդ... »,:

Ուղղ. « այրուրն... տանն ուր... մանկանն՝ յորում ծնաւ... ինձ այլապէս »,:

Էջ 120. տող 30. « Արդ ցեբը վրիպեցուցանեն աստեղագէտը զմարդկութիւնս. զի զնեն երեսս պատուականս զանուն աստեղաց, և զմեկնութիւն իրացն յանառնոցն՝ որ առ մեզս բառաչեն՝ տանեն »,:

Ուղղ. « իրս,.... բառաչեն եւ արածեն », ուղղելով նաեւ կիտաղոսթիւնքը՝ մարթի ընթեռնու. « զի զնեն իրս պատուականս զանուն աստեղաց, և զմեկնութիւն իրացն՝ յանառնոցն որ առ մեզս բառաչեն և աւրածեն »,:

Էջ 120. տող 33. « Զի թէ յանառնոց առնու երկինք զօրութիւն գիտել և ճանաչել զՆպս և զիրս մարդկանս, ապա և հնազանդեալ են այլոց պատճառակեաց, զի ի խոտակեր անառնոցն առցեն սկիզբն իրացն մեկնութեան »,:

Ուղղ. պաճարակեաց, այսինքն կենդանակերպիցն. որով գուշակութիւններ կը կատարուին:

Էջ 122. տող 35. « Քանզի ոչ ոք երբէք ի թագաւորաց պահեաց գտանել զժամս որդւոյ իւրոյ աստեղօցն՝ տեսանել թէ հասանից՞ նմա վիճակ թագաւորութեան, և թէ ոչ. և ոչ ի ծառայից ոք երբէք եղել տէր, թէ զայս այսպէս մեկնիցեմք.... Եւ զիմոյ արդեօք ոչ ոք պատանեաց ժամանակ ծննդեան ծառայութեան միւում ումեք յայտոց թագաւորաց, որք կարգ ըստ կարգի թագաւորեցին »,:

Ուղղ. « ոչ ոք պահեաց ժամանակ ծննդեան ի ծառայիցն միւում ումեք » ?...:

Թերեւս Ս. Բարսղի միւռն եղբը է ըսել թէ ինչպէս այս թագաւորներուն՝ որ իրարու յաշորդեցին, ծառայից մէկը չպա-

հեց ծննդեան ժամանակը, որպէս զի իւր որդին թագաւորեցնէ:

Էջ 124. տող 20. «Եւ զի այս ամենայն փոփոխումը ժամանակաց աստիճանաց տարգարագնացիւր լուսաւորացն շըրջեալ անցանեն ի վերայ մեր»:

Ուղղ. արագացնացիոք? Թէ և արդարագնացիոք հաստարագնացիոքի իմաստը կու տայ:

Էջ 127. տող 10. «Փանգի լուսին, յորժամ երկոտասանիցս կատարէ զընթացս իւր, ի տարին մի կատարէ»:

Ուղղ. ի տարի մի կատարէ. լուսինն տասն և երկու անգամ կատարելով իւր ընթացքը՝ մէկ տարի կ'ըլլայ:

Էջ 128. տող 26. «Չի որ բնական իցեն անդ յաշխարհին Հնդկաց և կամ աստ ի Բիւրիտոնի աշխարհիս՝ միով հաստարութեամբ միակշիռ տեսանեն զծագել արեգական»:

Ուղղ. ի Բիւրիտանիա աշխարհին? Թէ պարզապէս Բիւրիտոն (Պէյլուսթ):

Էջ 129. տող 7. «Այլայլի պշտու տեսին, և զլոյսն իբրեւ զմայլ իմն տեսանէ»:

Ուղղ. պշտեան:

Հմտ. «Եւ յորժամ կարի քաջ զայս ի վերայ եղեալ պշտոցոս ընդերկար հետատան»:

Էջ 129. տող 20. «Սից՝ արդեօք տեսեալ քո ի բարձրաբերձ բարձրավանդակաց զգաշտ ընդարձակ և մեծանիստ, յորում վարիցին հարկիք եզանց ի բացավայրի ուրեք. զիմարդ արդեօք թուիցին քեզ հանդերձ եզնող ոգնասաւ որ վարիցին զնոսա, այլ թերեւ իբրեւ զմըշխնս գեոնագնացս....»:

Ուղղ. վարիցեն... եզնող արօրաւն կամ հօտաղաւն?

Եթէ դիտուի բարձութեան վրայէն, երբ լծականը մաճկալով և արօրով վարելու ըլլան դաշտը, մըշխնի կը նմանին. ապա րաւ զարեւ կտրելի է երկու կերպ հասկընալ. 1. զիմարդ թուեցին քեզ (հարկիք եզանց) հանդերձ եզնող հոտաղաւն. 2. զիմարդ թուեցին քեզ (հարկիք եզանց) հանդերձ եզնող արօրաւն»:

Էջ 130. տող 35. «Եւ զժանձրամած ստոյն գատուերն մերկանայ յերեսաց երկրէ, և զխաւարն մթապատ հալածական ի տիեզերաց երկրէ»:

Ուղղ. երես. «երկրէ», անուշադիր կրկնութիւն է նախընթացին:

Էջ 133. տող 2. «Եւ իրագէտը իրացս այսոցիկ են, ասեն որ ընդ լուսով լուսինն նշիցեն, առաւել խոնաւութիւն լիցի ի գլուխս նոցա»:

Ուղղ. «Եւ որ իրագէտը... որք ընդ... լիցի»:

Էջ 133. տող 32. «Եւ յայնմ ծովում որ անուանեալն կոչի երկկորեանց, նմա նութին սրտականց է՝ ասեն՝ ի միջի, իբրեւ եթէ ձգեն և ծծեն, կալ մնալ ի պականութեան՝ ընդ պականելն լուսնի, և իբրեւ թէ բղիւնով բղիւն վերանալ ելանել փոքրով զլուսն զի ընդ լնուլ լուսնին յորդեացին»:

Ուղղ. «երկկորեանց.... փոքրով»:

Թէպէտ հոս իմաստը կը պահանջէ որ յաւելցուի «և ըստ յառեւոյ և ըստ անկն լուսնի իբրեւ թէ բղիւնով բղիւն վերանալ ելանել փոքրով զլուսն», բղիւնը և վերացողն ոչ թէ կը փոքրէ, այլ վեր կը ցաթթէ:

Էջ 134. տող 24. «Բայց անհամ և սնոտի պատմութիւն, որ իբրեւ զբարբանջ ծերութեան զառանցելոյ անկելոյ ի մտաց իցեն, անչափ ծաղու և արհամարհանաց արժանի են, զի ամենայն ումեք յայտնի և երևելի է զի ի ստեղծութեան մտաց կատարեն զստայտ պատմութիւնն»:

Ուղղ. «պատմութիւն ասեն, որ... յայտնի երևի... մտաց կարկատեն...»:

Էջ 135. տող 6. «Եւ զայս անչափ քաղաքս ակօսածեւ հրապարակօքն և փողոցօք, զիմարդ միանգամայն լուսատրեցիկ»:

Ուղղ. «լուսաւորիցեն»:

Էջ 135. տող 13. «Ձի լուսաւորէ զամենայն նրբափողոցս և զամարաստունս, և բաւական է լայնատարած ծագումն նորա սփռել յամենայն կողմանս, և զբաւել ունել զաշխարհս ամենայն միով միատա»:

բած պայծառութեամբն զոր արհանէ ի վերայ ամենայնի, և տիրէ ի վերայ ամենայն ազգաց իւրով յորդաօնաց ընթացիւքն , ,

Ուղղ. օղափնաց:

Էջ 136. տող 34. “Փառաւորել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին, որ է օգնական կենաց մերոց, այժմ և միշտ , , և այլն. և կամուռ է բանս. glossa:

Էջ 138. տող 11. “Բայց տնկոց և ծառոց թէպէտ և ասի՝ թէ ունին կենդանութիւն, անունը և ամուսն զարմանով և խոնաւութեամբ ջուրցն՝ զոր առնուն՝ կոչի կենդանութիւն. և ոչ իրեւ զանասունսն են՝ որ շարժումն թղիսմանց և ազդումն և գնացս ունին , ,

Ուղղ. շարժումն մասանց կամ անդամոց ?

Էջ 138. տող 15. “Եւ վասն այսուրիկ ասաց՝ եթէ բղխեսցեն ջուրք, զի ամենայն ինչ որ ի մէջ ջուրցն զուղեսցի, և ի նստին շրջեսցի, և զոյնս ձեռիցէ, զեռուն բնութիւն է , ,

Ուղղ. և նոյնաման իցէ. ինչ որ ջրի մէջ ծածկուի կամ կը պտուրի կամ որ նման ձեռով բան ըլլայ (ինչպէս խեցեմորթիք և այլն) նորա բոլոր զեռուն անուն ունին:

Էջ 138. տող 25. “Եւ այսու աստուածաբարբառ պատգամաւս, որ իբրեւ փորը իմն երեւի, որ ազգ զուղակաց էին՝ որ ոչ գոյին վաղվադակի ի հաստել , ,

Ուղղ. գային:

Հմտ. և որ ազգ զեռնոց էին՝ զոր ոչ եւծ ի լինել. Սկզ:

Էջ 138. տող 29. “Եթէ գազանքն՝ որ ըստ իւրեանց կերպարանացն ծնանին զիւրեանց սերմանիսն , ,

Ուղղ. նմանիսն, զի որ ծնանին զնմանն իւր ծնանի ի սերմանէ:

Էջ 139. տող 19. “Եւ այսու զօրուս թեամբ հրամանի արարչութեան Աստուծոյ զնաւն մանուկն հանդերձ մեծամեծովք եղեն վաղվադակի ըստ իւրաքանչիւր ազգաց և կերպարանաց , ,

Ուղղ. “զնունք մանուկն հանդերձ մեծամեծօքն եղեն վաղվադակի ըստ իւրպ-

քանչիւր ազգաց և կերպարանաց , , մանր զեռունները և խոշորները, իւրաքանչիւրն ըստ իւր կերպին և ցեղին գոյացան իսկ և իսկ Աստուծոյ հրամանաւ:

Հմտ. էջ 142 տող 1:

Էջ 140. տող 14. Եւ այսու յայտ է, թէ այլ ընդ է ձկանց՝ որ ի ջուրն շրջին, և այլազգ է բնութիւն՝ որ ունի զայլաւ կերպ շարժումն, և զատ և միանման բնութիւն, որ կայ միշտ յիւրում կայանի անդ, և այլ անփոխ գնացիւք ըստ պատշաճի իւրոյ կենդանութեան:

Ուղղ. “ և այլափոխ ցնացիւք , , ամէն կենդանի անասուն իւր բնութեան և անղամոց պատշաճ շարժումն և քայլուածքն ունի:

Հմտ. “ Բղխեսցեն (ասէ) ջուրք , , այսինքն է որ պէս պէս կերպարանաւ ունիցին ըստ իւրաքանչիւր ազգաց, և այլափոխ անուանաւ և զոյնս, և մարմինս և զոյնս, մարմինս և կերակուրս էջ 141 տող 19:

Էջ 141. տող 8. “Որ անուանեալ կոչին տեգաղք , ,

Ունի՝ առնչութիւն ընդ դէպքի ?

Էջ 141. տող 27. “Եւ կամ ո՞վ ոք ի մարդկանէ, որ անդէն ի բարձունս կրդզեաց ծերացեալ իցեն, և զամենայն ատուրս կենաց իւրոց ի խոնաւ բնակութիւն հանեալ իցէ թէ կարիցէ առ զնշանս կերպարանաց ըստ իւրաքանչիւր ազգաց և կերպարանաց ձկանց: Պատմեն որսորդքն՝ որ ի հնդիկ ծովուն ունին միշտ գլատակս, զձկանց, և զայլ ազգ կերպարանաց յայտ առնեն որսորդք՝ որ յեգիպտոսնաց ծովուն աշխատին, և զպէսպէս նմանութեանց ձկանց տան զրոյց... , ,

Այս պարբերութեան մէջ ուղղելի են թէ կետադրութիւնք և թէ իմաստի սխալներ. ուստի ուղղելի է. “... թէ կարիցէ առ զնշանս կերպարանաց ըստ իւրաքանչիւր ազգաց: (Չպէսպէս) կերպարանաց ձկանց պատմեն որսորդքն՝ որ ի հնդիկ ծովուն ունին միշտ զվատակս. զձկանց և զայլ կերպարանաց յայտ առնեն որսորդք՝ որ յեգիպտոսնաց ծովուն աշխատին , , Եթէ մի-

ծովու մէջ կ'աշխատին, միւսի մէջ ուրեմն կրնան վատակիլ, առանց յատակն իջնելու և խեղդուելու վտանգի իրենց զիրենց ենթարկելու:

Էջ 142. տող 18. “Եւ ոչ ունին ձկունք կէս ատամանց ի բերանս իւրեանց, որ պէս ունի արջառ և ոչխար, որ առ մեզ սնանի, և չիք ի ձկունս” որ որոճիցէ, ի Ուղղ. “կէս ատամանց”:

Համեմատելով Ս. Բարոնի արջառի և ոչխարի ատամներու հետ չէր կարող ըսել որ ձկներ չունին կէս ատամանց, այլ կեռիք չկան անոնց բերան որ որոճան, այլ անոնց փոխարէն ունին սորա տառակներ՝ և ամբողջ:

Էջ 143. տող 16. “Բայց զայս պարտի ամէկ զմտաւ ազահն անապականի (յոր. աւագակեր),”:

Թուի ուղղելի. անյազակեր:

Հմտ. “Աղէ զի՛նչ առաւել իցէ մարդ աղքատ քան զձկնիկն փողրիկ՝ առ մեծատանն, որոյ բացեալ զբերանն յագահնոսիս և անյազ ժողովեսցէ զարարս այլոց,” Անգ. տող 6:

Էջ 144. տող 20. “Փախիցուք այս սուհետեւ ի ծուռ բարոյից ծուցն՝ որ նենգն անձնն չարիս մարդկան և բաւական համարեացուք զայն՝ ինչ արդարութիամբ ստացեալ ունիցիմք,”:

Ուղղ. “որ ինչ արդարութիամբ,”:

Էջ 145. տող 1. “Եւ կալ Յնալ միաբանիւ ի միում բանի կամ ի միում խորհրդի ոչ երբէք յօժարեն, այլ այլք ընդ այլոյ երեւին յամենայն գործս և գնացս,”:

Ուղղ. այլք ջնջելով:

Էջ 145. տող 6. “Եւ անհնարին է խորշիւ և մերժել յանիրաւութենէն զոր ունին, և զերծանել ասլրել ի փնասակար խորամանկութենէն. զի իբրեւ հանդերձ զգեցեալ ունին զբարկամոտրիսն ի վերայ խորհրդոց չարեաց՝ որ կան ի սիրտս նոցա,”:

Ուղղ. “զխորամանկոտրիսն, Բարեկամութեան ոչ մի ակնարկ չկայ բնագործ մէջ. այլ խորամանկութիւնը զայլեր իբրեւ զա-

ռան մորթ կ'առնեն վրաները և անով կը ծածկեն իրենց սրտի դառնութիւնը:

Էջ 145. տող 35. “Եթէ գոն ձկունք՝ որ զբարի բարք ունիցին յարարածին իւրեանց, մեզ ևս պարտ և պատշաճ է լինել բարեբարք մերով արձակ կամօք, զի մի նախատիցիմք անասնովք, որպէս նախատեցան ոմանք՝ որոց բարձան ձառք իւրեանց,”:

Ուղղ. “որոց բացան ձառք (բերանը) իւրեանց,”. զոր օրինակն էչն Բաագաւդամու? որ նախատեց սուտ մարգարէի անգլութիւնը:

Էջ 146. տող 33. “Քանզի յայնմ ծովէ՛ք՝ զոր ոչ երբէք կոխեցին զմկանունս նաք իորեանց, ճօճին պերճն ճեմօք,”:

Ուղղ. “յայնմ ծովի... նաւք. (նոքա) իւրեանց,”. կէտը այս ծովերու մէջ ուր չէ հասած մարդու ոտը, իրենց պերճն ճեմելով կը խաղան և կը ճօճին ալիքնեւրու վրայ:

Էջ 148. տող 19. “Քանզի սակաւ ինչ ժամանակս հասանեն անդր գնացք արեգականն, և զգաղցը ջուրսն՝ որ են ի նմա՝ ոչ այնչափ շատ ձծե՛ ճառագայրն արեգականն,”:

Ուղղ. ըստ օրինակին “ձծե՛ն ճառագայրք արեգականն,” զի ոչ եթէ մէկ ճառագայրն կը ձծէ ծովերու ջրերը. փոխաբերաբար միայն կարելի է եզակի առնել. բայց ոչ զդասականացեալ բնութեան երեւոյթներուն վրայ խօսելով, նա մանաւանդ զըրուած հարցին մէջ:

Էջ 149. տող 35. “Աղբ մի ոք դիցէ բարուրս եթէ՛ չեմ տեղեակ բարուց իմօք. զի թէ՛ կամիմք՝ ի բնէ յարարածոյս մերոյ յանկեալ ունիմք զընտանութիւն հաճոյից՝ զօտարութիւն չարութեանցն,”:

Ուղղ. կամիցիմք?... տնկեալ... և զօտարութիւն ի չարութեանցն,”:

Եթէ մտածենք բնական լոյսն կ'իմացնէ մեզի որ բարութիւնն, առաքինութիւնն՝ տնկակից է բնութեանս, իսկ չարութիւնը, օտար և զատ բան մը, եկամուտ հակառակորդ:

Էջ 149. տող 21. “Ձի եթէ բանիւք՝

պատուական հմբ, և եթէ օրինօք՝ վարժք և կիրթք, և եթէ աւետեօքն Աստուծոյ միշտ յառաջ գալ և զարգանալ յորդեմ , , ,
Ուղղ. յորդորեմ , , ,

Էջ 150. տող 16. “ Զիբ քաղդեայ և ոչ աստեղագէտ, և ոչ խնամայցէ յայնց գնացից աստեղաց յառաջագոյն զփոփոխումն օդոց և զամբոխել հողմոց , , ,

Ուղղ. և “ ոչ որ իմանայցէ , , , չէ թէ քաղդեայ կամ աստեղագէտ, այլ ո՛վ որ ալ ըլլայ, չէ կարող այնպէս իմանալ օդոյ փոփոխութիւնը ինչպէս եքիսոս անասնիկն :

Էջ 150. տող 25. “ Զամենայն ինչ բաւական է տեսանել ակն մեծութեան նորա, և ամենայնիւ առաջնորդել. զի ակն է նա արթուն իմաստութեան ամենայնի, և առ ամենեսեան մերձ է տալ զկեանս և զօգնականութիւն , , ,

Ուղղ. “ և ամենայնի... իմաստութեան, ամենայնի և առ ամենեսեան... , , ,

Ակն մեծութեան է նոյն և ակն արթուն իմաստութեան որ կը տեսնէ ամեն բան և կ'առաջնորդէ ամեն բանի և ամեն բանի մէջն է, կեանք կու տայ, ամեն բանի մօտն է՝ օգնութիւն կ'ընէ, այս է Աստուածային Տեսչութիւնն :

Էջ 150. տող 31. “ Աբգ, սիրեցէք զկանայս ձեր թէպէտ ի հեռաստանէ վայրաց եկեալ պատահեալ էք միմեանց , , ,

Այս խօսքը չի կապուիր նախընթացին հետ. մինչդեռ Ս. Հայրապետն անասնոց օրինակէն աստիճանաբար կ'անցնի համեմել և յարդարել իւր խրատական յորդորակները :

Էջ 154. տող 35. “ Զի զոր ինչ լուայք ի մէջը ընդ առաւօտն և զոր ընկալայք քանից ի ժամ երեկոյիս, բնակիցեմ ձեզ հանապազօրոյ , , ,

Ուղղ. “ Բանին... ընդ ձեզ , , ,

Էջ 157. տող 9. “ Փանի խոտեալ բանն մանիքեցոց է՝ որ աստի ունի զվկայութիւն , , ,

Ուղղ. “ որ այսպիսի ունի ո՞ր ?...

Էջ 157. տող. 23. “ Իսկ ցամաքային անասունը իբրեւ իմացումն իմն ունի, և

դիւրագոյնս գիտեն ընտրել իմանալ, և եւրագս տեսանեն, և զանցեալ իրս յիշեն. քանզի բազումք ի ցամաքին չորքոտանեաց ունի ինչ այսպէս թուի... , , ,

Ուղղելի են կէտերը . “ Իրս յիշեն : Փանգի... ցամաքային (ըստ միւսներուն). առաւելութիւն. վասն այսորիկ , , ,

Ցամաքային կենդանիք որովհետեւ ունին այս ինչ առաւելութիւնները, անոր համար ինծի կ'երեւայ որ... :

Էջ 158. տող 34. “ Եւ նման են կրակի՝ որ ծածկեալ կայ յանթիղի, զի ցայն վայր է դաղարիւն նորա յայրելոյ, մինչ զի գացէ ինչ՝ որոյ տիրեացէ, և յորժամ գտանէ տեղի՝ վառեալ բորբոքի հանդերձ փայտիւ. յորժամ ճեպեալ բոցոյն , , ,

Ուղղ. յայնժամ, որպէս հակադիր վերելի յորժամին :

Էջ 163. տող 14. “ Եւ կէսքն ի թրուշնոցն զան ի ձեռս մարդոյ ի համրոյր և ի սնունդ, բայց միայն ի տկար թշնոցն՝ որ ահարեկեալ զարհուրին, և ոչ ժուժայ եթէ մերձեցի ի նա ձեռն մարդոյ , , ,

Ուղղ. “ Ի ձեռն մարդոյ . . . ի տկար թշնոցն... զարհուրի , , ,

Էջ 163. տող 24. “ Զի կէսքն ի նոցանէն խորամանկը են, և կէսք միամիտք. կէսքն բարբառօք են, և կէսքն անբարբառք, կէսքն զեղեցկաժայն և քաղցրաբարբառք, և կէսքն խոտաժայնք և ոգեղարարառք , , ,

Ուղղ. ըստ Անտոնեանց օրինակին (տես Նորայր, Բառաքնն . 65) “ Տգեղարարառք , , ?

Գեղեցկաժայնին հակադիրն է խոտանայնք, իսկ քաղցրաբարբառքին հարկաւ պէտք է ըլլայ տգեղարարառք :

Էջ 164. տող 15. “ Եւ ունին թագաւոր՝ որ ոչ նկատեալք ընտրեցաւ ի վերայ նոցա թագաւորել, այլ որ անզատին յիւրեանց բնութենէ և ի նոյն ծնեալ, ոչ որպէս առ մեզս անարժան գործք գործին, զի առանց քննելոյ կացուցանեմք մերով ընտրութեամբ մեզ իշխանօրեմ , , ,

Ուղղ. իշխան անօրեմ :

Իմաստը շատ պարզ է. Թռչունը իրենց բնութենէն կ'ընտրեն թագաւոր. մենք եւս մարդիկս մեր բնութենէն կ'ընտրենք, սա-
կայն անձնիշխան կամովն արժանաւորը
թողած, անարժանը կ'ընտրենք շատ ան-
գամ մեզ՝ անօրէն իշխան կամ թագաւոր.
կ'ակնարկէ իւր ժամանակի արիոսեան կայ-
սերը:

Էջ 165. տող 21. “Եւ զմեղրն որ նման
ցօղոյ զքարամբք և զոստովք և զտերեւօք
ծորեալ իջեալ կայ, քաղիպ առեալ ի բե-
րանն ճեպով բերէ ,,”

Ուղղ. “զտերեւօք ծառաց ժողովեալ ի-
ջեալ կայ պաղեալ, առեալ ի բերանն ,,”

Այստ ժամանակ որդ մի փոքրիկ սեւո-
րակ գորշագոյն կ'իջնայ ծառերու վրայ,
մանաւանդ ուսեկոյն, որոյ հիւղն քաղցրօտ
է. այդոնք քաղցր նիւթ կը ծորեն և կը
ծրտեն ծառերու տերեւներու վրայ, որ
նման է մեղրի և եթէ մի քանի օր անցնի,
կը պաղի, և սպիտակ շերտ կը կապէ տե-
րեւի կամ քարի վրայ. շատ փափուկ է
ոյդի մարմինը, եթէ ջարդուի կարմիր
թուփս (կիւլձկ) արիւն կ'եկէ. ամանք կո-
չեցին “որդն կարմիր ,,” յորմէ ներկ կը
պատրաստուէր. իսկ ցօղած նիւթէն՝ գազ-
պէն կը պատրաստեն:

Էջ 168. տող 14. “Եւ արդ լուի-
ցեն զբարս համրացեալ թռչնոցն՝ մարդա-
տեանցն, որ փակեն զդուրս ընդզէմ օտա-
ւաց, և ոչ կամին ընդունել ընդ յարկաւ
զազգալիցս իւրեանց ի ժամանակ ձմե-
րայնոյ, գոնէ գիշերի իմիջ տակաւ ,,”

Ուղղ. գտակաւ:

Էջ 168. տող 35. “Եւ մի ոք կարի
յոյժ տրտմացի վասն աղքատութեանն,
և մի ոք այնչափ մոռացի զանձին հա-
տանել զյոյս, յորժամ ոչինչ գտանիցի ի
տան: Հայեցիք ընդ ծիծառն անջատ և
միանձն. տեսաննս զխաղդ դարկիցի, աը-
կար զօրութեամբն առնիցէ դադարս ան-
ձին ,,”

Ուղղ. շարկիցի:

Եւ ինչպէս կը շալկէ ծիծառը. որով-
հետեւ միանձն է, ինքն իւր տառապանաց
բուռիկը շինելու համար հարկաւոր նիւ-

թերը, բերանով և ոտներով, որպէս թէ
շալկած կը կրէ և կը շինէ:

Էջ 170. “Ձի յորժամ զտառապանաց բու-
նիկն կամիցի շինել քերանցի քաղի տա-
նի յիւր, և քանզի ոչ կարէ կրել կաւ,
զծայրս մազացն ի ջուրսն թանայ, և եւ-
րանէ ընդ մանր փոշի գնայ և յայնպիսի
տառապանաց հնարիւք՝ ընու զկարօտօրին
կատն կրելոյ ,,” Կրեյն նոյն է ընդ շարս-
կելոյն:

Էջ 172. տող 24. “Ձի յորժամ քեզ
քուն ոչ գայցէ ի գիշերի, աստույի զարթ-
նօրինս՝ խորհողակից լեալ բարուց գի-
շերային թռչնոց... ,,”

Ուղղ. աստաջիր զօրնօրինս:

Գիշերային թռչունք կամ թռչունք ի
գիշերի իրենց երգով փառաբանիչք են
Աստուծոյ, որպէս սոխակ կամ աքաղաղն,
ուստի Ս. Բարսեղ կ'ըսէ թէ երբ քունդ
չի տանիր, աղօթէ, երգէ. նոյն դիտմամբ
Շնորհաւրին գիշերապահներու համար շա-
րադրած է իւր “Ձարթիք ,,” ներք:

Էջ 173. տող 10. “Տեսցուք դարձեալ
որչափ նման իցեն տեսեան հաւալուտան,
որք միշտ հանապազ մնտի իմաստութեան
աշխարհիս խղիւքն ,,”

Ուղղ. կղիւք ևն:

Աղբարեւ իմաստունք միշտ կարօտ են
ուսմանց և խիստ հետաճուտ:

Էջ 174. տող 14. “Եւ կամ զիմրդ
պատմեցիք քեզ զաւագին բազմութենէն զօ-
րաց միանգամայն ժողովելոց մարախոյ,
որ միով ժամադիր ժամու շարժեալ շողա-
ցեալ միահոյլ ի չու անկեալ, և իբրեւ
բազմութիւն զօրաց ի միասին ժողովելոց ,,”

Ուղղ. “տողացեալ ,,”?

Եթէ թռչնոյ կը համեմատէ, կարելի է
ասել շողալ յօդս ինչպէս ապացուցած է
Նորայր (Բառաքն. էջ 69). բայց որով-
հետեւ մարախն բազմութեամբ իբրեւ ամպ,
իբրեւ շոգի կը մթնցնէ արեւու երեսը, կը
յարմարի ըսել փողացեալ. իսկ զօրաց
նմանցնելով հաւանական է ըսել տողացեալ,
իբրեւ բանակ բազուկ առ բազուկ իրա-
րու ետեւից շարուելով. վերջինս թուի
բնագրին. յարմար:

էջ 175. տող 10. “Եւ եթէ անկցի մի ի մեղուացն յիւր քորափնացի, անդէն պակասեալ գտանիցի ի կենաց. քանզի ընու պարարտութիւն իւրոյն զխելս նորա: Իսկ եթէ ցանիցէ ոք փոշի իսկ և իսկ միելեւ յիւրն քորափնալ իցէ, անդէն ի նոյն դարձցի ի կենդանութիւն:”

Ուղղ. “բարաւեցի... միւս չեւ իւրն քորաւեալ իցէ:”

Ոչ թէ լուկ ինկնալ, այլ ծծել և թափանցել հասկանալի է. քանի որ դեռ իւրը չէ ծծած և թափանցած մարմնի և ուղեղի մէջ, բարակ փոշի ցանկելով կարելի է խելքի բերել:

էջ 176. տող 15. “Եւ զայս զինչ արասցուք, զի արդ երկիր առ իւր կոչէ զմեզ, կճատ կատարեալ կայ պատրաստահան, պատմել մեք զճառս իւր զազանաց և զամենայն զեռնոց, որ ի նմա ճարակեցեն:”

Ուղղ. ճաշ կատարեալ... զճառս որ գրաւանաց...:

Հմտ. “Եւ արդ պատմութիւն չափով կերակրեցայք ի մէջ, և ոչ աւելի քան յագեցն ձեր աղղոցս սեղան ճաշից:” էջ 179 տող 6: “Սեղան որ առաջի ձեր կազմեցաւ ընդ առաւօտս աստուածոցէն բանին, որպիսի՝ ինչ արդեօք ձեզ ճաշակեցաւ:” էջ 180 տող 1:

էջ 178. տող 8. “Կէսք ի ձէնջ ի լիցս ընթանան, և կէսք ի տապեղելունս, ուր ստուութիւն է և անկարգ յամառութիւն, և հանդերձ ջահաւէր ապականութեամբ, որ նովին նման իսկ են:”

Ուղղ. “և որ նոցին նման իսկ են:”

էջ 178. տող 11. “Զի դեւ բնակաւոր կայ յայնոսիկ՝ որ ի ներկածոյ և ի տարագիր ուղունսն հարեալ իցեն, և վառեալ բորբոքէ ի նոսա զմուրորութիւն միշտ ի նոյն սնոտի մուրորութիւն յօժարել, և տանի բերէ զշահ կողմանց երկուցունց, որ զմին ուրախ առնէ յաղթութեամբն, և զմիւսն տրտմեցուցանէ տրտմութեամբն, զմիւսն մեծամտեալ հպարտութեամբն, զմիւսն ընդ ամօթ հարկաւ զարկաւ, և զմիւսն ընդ ամօթ զարկաւ:”

Ուղղ. “ի տպագիր ուղունսն... պարտարեալ, զմիւսն:”

Կախարդական բժժանքները գունաւորած էին և թէ փորագրուած և քանդակուած այլ և այլ նկարներով և անասնոց պատկերներով, ուստի տպագիր յարմար է կոչել քան տարագիր, որպէս օտար, այլակերպ. եթէ մէկը կ'ուրախանայ յաղթութեամբ, տրամաբանօրէն կը հետեւի միւսն իւր պարտութեամբը տրտմի, այստեղի կրկնութիւնը չի նշանակեր բանի ստատկութիւնը, վասնզի համեմատութեան մէջ կը դնէ երկու կողմերու տարբեր զգացումները:

էջ 178. տող 21. “Եւ միւսն որ յայն խաղ չիցէ, դատարկացեալ այլ իմն չաւրեօք պատեալ գտանիցի:”

Ուղղելի են կետադրութիւնը “յայն խաղ չիցէ դատարկացեալ, այլ իմն չաւրեօք պատեալ:”

էջ 180. տող 16. “Զի և ոչ ի մարգարէն Աստուծոյ Եղիսէն հրաժարեցին իրեն յաղքատէ ի վնասակար? հրաւիրակէ՝ բարեկամք, որք ընկալան ի նմանէ վայրենի բանջարեղէն խորտկան:”

Ուղղ. ընկալան. առանց դիմ. յօղ. և յի՛նքն զնորունցանք ի իմաստ ունի մինչդեռ պէտք է հասկնալ և հիշատարկեցան:”

էջ 180. տող 20 և Ոմանք առ ամբարշտութեան մտաց իւրեանց՝ փոփոխմունս իմն կամեցան մուծանել յաստուածնդէն բանս զրոյ: Եւ եւ ոչ եթէ անգիտակ էղէ բանից նոցա:”

Ուղղ. և էւ եւ ոչ:

Հմտ. և Բայց եւ եթէ խոտս լսեմ ի զրոյ. խոտս գիտեմ զնոսա ո էջ 181 տող 3:

էջ 180. տող 38. և Եւ որպէս նոցայն բաղադուշեալ երթան զհետ ցնորից քնոյն թմրութեան, նոյնպէս և նոքա ըստ խաւարեալ մտաց իւրեանց զանդաշելոյ առնեն զմեկնութիւնս ոչ:

Ուղղ. Նոյնպէս և տրաւ. Բանդագուշեալ նոքա են՝ հեթանոսաց իմաստունք, որոնք անպատմութիւններ կը կարկառակ խաւարեալ մտքով տրաւ հեր-

ձուածողը՝ որ մուլար մեկնութիւն և իմաստ կու տային գրոց խօսքերուն:

Էջ 181. տող 19. « Բանգի կէսը այսպէս ասացին զերկրէ թէ զգնտի կերպարանս ունի, և կէսըն զուրանի նմանեցուցին, կէսըն սկտեղ »:

Ուղղ. սկտեղի?

Էջ 181. տող 16. « Եւ կէսըն թէ հարթ հաւասար իսկ է յամենայն կողմանց, և կայ ի միջավայրս վայրաց, և ճախարակագործ կերպարանաց նման է և կէսըն եքորի կերպարանաց նմանեցուցին, ոմանք խորամիջոց անուանեցին »:

Ուղղ. խորի?

Նախընթաց « Ն » կարելի է սխալմամբ առնուած է և կէսըն յի դիմորդէն. խորի կերպարանքը (քորս կամ կօտ) զմեթարդ է, ուստի հորիզոնը իւր շրջածիր կերպարանքով նման է գտակի, ուսած դէպ ի դուրս. որի հակադիրն է՝ « խորամիջոց », որ նման է քառի, սկտեղ կամ սկաւառակի:

Էջ 182. տող 24. « Ի միտ առցուք՝ թէ զիմարդ և որպէս ընթացաւ բանն Աստուծոյ ընդ արարածս և որպէս սկիզբն երեւեցաւ, նոյնպէս և ճակ փութոյն հաստատեցաւ. բանն յայնժամ յորորքեցաւ, և գործն մինչև ցայժմն եւս կարգի գայ՝ ամենայն ազգ զեռնոց, և մինչև ի կատարումն ժամանակի, նոյնպէս կայ միայ յարարածս »:

Ուղղ. Բարբառեցաւ... գայ՝ առ ամենայն »:

Բանն ի սկզբանն բարբառեցաւ, ասաց և եղև, իսկ գործն մինչև ցայսօր կը շարունակուի ըստ բնութեան անձնիւր արարածոց շնչաւորաց և անշնչից:

Բարբառեցաւ ուղղագրութիւնը կը զրտնուի Անտիոնանց ձեռագրին մէջ (տես Նորայրի Բառարանութիւն, էջ 66):

Էջ 186. տող 33. « Դարձեալ և ոմն ի մտադիր մարդկանէ, որ միտ եղեալ նայեցի փութով ընդ փոփոխումն իրաց բազմաց. սպասեաց եգիտ զոգնի մի ցաւաքային »:

Ուղղ. « Նայեցաւ որովհետեւ նա որ

սպասեաց եգիտ, կը հետեւի որ « միտ եւ զեալ նայեցաւ »:

Հ. Գ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

Շարայարելի



ԵՒՐՈՊԱԿԱՆ ԲԱՌԵՐԸ

ՀԱՅԵՐԷՆՈՒՄ



Գրուտ. ԳԱՐԻԷԼԵԱՆՅԷՆ

(Շար. Բազմ. 1907 էջ 444)

Շատ անգամներ է պատահում որ հայ ընթերցողը մի հայերէն տեխնիկական բառ հասկանալու համար՝ մտածի նախ թէ ինչ է նրա եւրոպական համապատասխան բառը, եթէ զրոյր արդէն բարութիւնը չէ ունեցել նրան նշանակել փակագծի մէջ:

Բայց ինչ օգուտ մի բառից՝ որին իմանալու համար՝ պէտք է նախ թարգմանել! մասնիկները վերլուծել, նրանց եւրոպական ձեւի վերածել, և ապա մի միտք դուրս բերել, այն էլ եթէ Աստուած ողորմի!

Գաղափարը բառերից վեր է, պարոններ, և ամենամեծ ազգասէրները նրանք չեն որ վիճում են մի քերականական մասնիկի ազգայնութեան վերա: Շովինիզմը ո՛չ մի տեղ այնքան փոքրագութեան, անձուկ մտքի տպաւորութիւն չի թողնում որչափ երբ ցածանում է մինչև բառագիտութիւնը:

Բարեբաղդաբար այդպէս չեն եղել մեր հայրերը: Նրանք ասել են Պաւղոսի և ոչ թէ Ամենքիկայ, այն ինչ մենք պէտք է խղճմտանքից տանջենք Հորի ասելուց յետոյ!

Ինչ պատճառով կաւկասահայերը կորցրել են իրանց դատը այս խնդրում.

1. — Նրանք գոհ են եղել պաշտպանողականով, այն ինչ պէտք էին նրանք յարձակողական սկսել շովինիստ և ֆուսակար ուղղութեան դէմ.

2. — Նրանք այնքան զեղծման և ծայ-